

## ԱՍՏՎԱԾԱԾՆՉԻ ՊԱՏԳԱՄԸ

ԵԶՆԻԿ քահանա ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Դոկտոր Աստվածաբանության

## ԱՍՏՎԱԾԱԾՆՉԻ ՊԱՏԳԱՄԸ

ՀԱՐԱՍՏԱՎԱՆՔ  
1991

Աստվածաշունչը քրիստոնեական կրոնի Սուրբ գիրքն է, կազմված երկու հավաքածուներից՝ Հին Կտակարանից կամ Հին Ուխտից և Նոր Կտակարանից կամ Նոր Ուխտից:

Ուխտ կամ կտակարան տերմինները թարգմանությունն են հունարեն, լատիներեն բարերի, որ նշանակում են պայմանագիր, համաձայնություն, դաշինք և սովորաբար ցույց են տալիս Աստուծո հարաբերությունը մարդու նկատմամբ, և երբեմն էլ՝ մարդու հարաբերությունը մարդու նկատմամբ:

Հին Կտակարան տերմինը ցույց է տալիս այն համաձայնությունը, որ կնքվել է Աստուծո և հրեա ժողովրդի միջև և արտահայտում է առաջինի կամքը փրկելու մարդուն մեղքից և հաղորդակցության մեջ մտցնելու իր հետ: Այդ դաշինքը Աստուծո նվերն է ընտրյալ ժողովրդին, որը կոչվում է դարնալու աստվածային փրկարար ծրագրի հրագործման միջոցը, միջնորդը մարդկային ցեղի և Արարչի կապերի վերականգնման, որ խափանվել էր նախամարդու մեղքի պատճառով:

Հին Կտակարան տերմինը միաժամանակ օգտագործվում է անվանելու այն սուրբ գրքերի հավաքածուն, որոնք իրեն աստվածային հայտնության վավերական տեքստեր, իրեն աստվածաշունչ երկեր, պարունակում են այդ դաշինքն սկզբունքներն ու կանոնները: Այն առաջին անգամ օգտագործել է Պողոս առաքյալը (Բ Կորնթ. 3. 14):

Համապատասխանաբար Բ դարից սկսած օգտագործվում է Նոր Կտակարան անվանումը՝ մատնանշելու համար նոր՝ Քրիստոսով Աստուծո և ողջ մարդկության միջև կնքված դաշինքը և այդ դաշինքը պարունակող սուրբ գրքերի հավաքածուն:

Հին Կտակարանը միաժամանակ հրեաների՝ մովսիսական կրոնի Սուրբ Գիրքն է և ծնունդ է առել ու կազմավորվել հրեական միջավայրում:

Հին Կտակարանի հիմքում ընկած են այն հավաքածոները, որոնք ծնունդ առնելով դեռ բանավոր ավանդության ժամանակներում, աստիճանաբար ձևավորվել են և միանալով կազմել Հին Կտակարանի կանոնը: Գոյություն ունի Հին Կտակարանի երկու կամոն՝ հուդայական-պաղեստինյանը և հունական-ալեքսանդրյանը:

1. Հուդայական-պաղեստինյան կամոնը բաղկացած է երեք հավաքածոներից և ունի 39 գիրք, ըստ հետևյալի.

Ա. Օրենք-Մըսջն, (այս հավաքածուն ծանոթ է Հնգամատյան անունով)

1. Ծննդոց
2. Ելից
3. Ղևտացվոց
4. Թվոց
5. Երկրորդումն Օրինաց:

Օրենքի առաջին տեքստերը գրել է Մովսես մարգարեն (տես Բ Օրինաց 31 9-13, 24-25): Դ թագավորաց գրքում խոսք է լինում «Օրենքի գրքի մասին», որ Յովսիա թագավորի ժամանակ (640-609) գտնում է **քլիա** քահանայապետը (22. 3-20, հմնտ. Բ Մնաց. 34. 8-28):

Հնգամատյանի իրեն հսրայելի Օրենքի գրքերի հավաքածուի, վերջնական կազմությանը նպաստում են երկու կարևոր հանգամանքներ. ա. Հուդայի թագավորության մեջ 621 թ.ի Հովսիա թագավորի կրոնական բարեփոխությունը, որ մեծ զարկ տվեց Մովսիսական Օրենքի հեղինակությանը և իրավակա-

նոնական ձանաշմանը, թ. Բարելոնյան գերությունից հետո Եզրասի և Նեեմիայի կրոնական նախանձախնդրությունը, որ Մովսիսական Օրենքին եզակի դեր տվեց հետագա հուդայիզմի համոզմունքում, որ պահպանվում է մինչև այսօր:

Հնգամատյանի «Օրենք» անվանումը կապված է այն իրավա-կանոնական նյութի հետ, որ սփռված է վերոհիշյալ իինգ գրքերում և ընդլայնված ընտրյալ ժողովրդի պատմության դրվագներով: Եբրայերեն «**Մըսջն**» տերմինը չի սահմանափակվում հունարեն «**Ιηρόν**» և հայերեն «օրենք» տերմինների խիստ իրավաբանական իմաստով, այլ նշանակում է նաև «ուսմունք», որ Աստուծո կողմից տրվել է մարդկանց՝ կարգավորելու համար իրենց դաստիարակությունը:

Օրենքի հավաքածուն վերջնականապես կազմավորվել է մ.թ.ա. 5-րդ դարում:

Բ. Մարգարենություններ -Լբզկ'կ`

Նախանձախնդրություններ

1. Հետու
2. Դատավորներ
3. Ա Սամուել
4. Բ Սամուել
5. Ա Թագավորաց
6. Բ Թագավորաց

Հետա մարգարեններ

7. Եսայի
8. Երեմիա
9. Եզեկիել
10. Ովսիե
11. Հովել
12. Անոս
13. Աբդիու
14. Հովնան
15. Սիթեա
16. Նավում
17. Ամբակում
18. Սովոնիա
19. Անգեա
20. Զաքարիա
21. Սաղաթիա

Օրենքի հետ գուգահեռ դեռ շատ շուտ կրոնական հետաքրքրությունը թեքվեց դեպի մարգարենների սուրբ տեքստերը, ուր բացահայտ է Խորայելի պատմության մեջ աստվածային գործոնի անմիջական ներկայությունը: Մարգարենությունները, իբրև Աստուծո խոսքերը ուղղված ընտրյալ ժողովրդին, հեղինակություն են ստանում Խորայելի հասարակական մտքի մեջ և այդ գրքերը շուտով ձեռք են բերում կանոնական ուժ:

Մարգարենները տարբերակվում են նախնական և հետագա՝ գրքերի երկու հավաքածուներով, որոնցից առաջինը ունի պատմական, երկրորդը՝ մարգարեական բովանդակություն: «Մարգարեններ» կոչումը, որ ավելի համապատասխանում է հետագա մարգարենների երկերին, տրվում է նաև նախնականներին, հավանաբար նկատի ունենալով կամ այն համոզումը, թե այդ գրքերի հեղինակները եղել են մարգարեններ, կամ էլ այն հանգամանքը, որ այդ գրքերը պարունակում են պատմություններ Խորայելի հնագույն մարգարենների՝ կլասիկ մարգարենների նախակարապետների մասին, դրանով իսկ մատնանշելով այդ գրքերի ոչ թե պատմական տվյալների, այլ մարգարենությունների կարևորությունը: Ըստ հուդայական ավանդության մարգարեական հեղինակներ են համարվում Հետու Նավեն՝ համանուն երկի, Սամուելը՝ Ա և Բ Սամուել, Դատավորաց և Հռութ գրքերի, և Երեմիան՝ Ա և Բ Թագավորաց գրքերի և Ողբի համար:

Մարգարեական գրքերի հավաքածուն իր վերջնական կազմավորումը ստացել է մ.թ.ա. 5-րդ դարում:

#### Գ. Գրություններ-Տբմնովկ՝

1. Սաղմոսաց
2. Հոբ
3. Առակաց
4. Հռութ
5. Երգ երգոց
6. Ժողովող
7. Ողբ
8. Եսթեր
9. Դանիել
10. Եզրաս (=Բ Եզրաս)
11. Նեեմիա
12. Ա ժամանակագրություն (=Ա Մնացորդաց)
13. Բ ժամանակագրություն (=Բ Մնացորդաց)

Այս հավաքածոյում ընդգրկված գրքերը միմյանցից տարբերվում են թե՛ գրական ժանրերով (քանաստեղծություն, իմաստուն խոսք, պատմագրություն, հայտնություն), թե՛ կրոնական տարբեր հետաքրքրություններով (պաշտամունք, բարոյագիտություն, հույս, աստվածային դատաստան և այլն):

Այս հավաքածոն կանոնական ուժ ստացավ նախորդ հավաքածոներից տարբեր ձանապարհով: Քանի որ դրանք տարբեր բնույթի գրքեր էին, պետք է որ դրանցից յուրաքանչյուրը իր կանոնականությունը վաստակեր, անկախ մյուս գրքերից: Այս գրքերի կանոնականացումը սկսվել է մ.թ.ա. 200 թ. շուրջ և ավարտվել Նոր Կտակարանի ժամանակներում՝ 90-100 թթ.:

Այս ժողովածուից մ.թ. 6-րդ դարում առանձնացան իինգ գրքեր, ծանոթ իբրև տղիկլասով-բակիհըմն, որ 12-րդ դարից սկսած ընթերցվում են հրեական իինգ մեջ տոններին: Դրանք են.

Երգ երգոց - Զատկին,

Հռութ - Պենտեկոստեին,

Ողբ - Երուսաղեմի կործանման տարեդարձին,

Ժողովող - Տաղավարահարացին,

Եսթեր - Պուրիմին:

Եբրայական Սուրբ գիրքը կոչվում է Մջլջտ՝ կազմված Մըսջն (Թորահ), Լրզկ'կ` (Նեբիիմ) և Տբմնովկ` (Քեթութիմ) անունների առաջին տարերից:

2. Հին Կտակարանի երկրորդ կանոնը կոչվում է հունական՝ այդ լեզվով գրված (=թարգմանված) լիմելու պատճառով, և ալեքսանդրյան՝ ծագման վայրի անունից: Այս կանոնը արտահայտված է մ.թ.ա. 3-րդ դարում Ալեքսանդրիայում եբրայեցերենից հունարենի թարգմանության մեջ, որ կատարվել է Ալեքսանդրիայում, Եգիպտոսի մյուս շրջաններում և ընդհանրապես հրեական սփյուռքում ապրող հունախոս հրեաների կրոնական կարիքների բավարարության համար և կոչվում է Յոթանասնից (Վբրմւջակլգջ)` 72 թարգմանչների կորմից թարգմանվելու պատճառով:

Հուրայական կանոնի 39 գրքերից բացի այս կանոնը ունի ևս 10 գիրք: Ընդունված է 39 գրքերը կոչել նախականոնական գրքեր, իսկ 10-ը՝ երկրորդականոնական:

Հունական կամ Ալեքսանդրյան կանոնը նույնագես բաղկացած է երեք մասից, սակայն տարբեր դասավորումով, ըստ հետևյալի:

Ա. Պատմական

1. Ծննդոց
2. Ելից
3. Ղետացվոց
4. Թմվոց
5. Երկրորդումն Օրինաց
6. Հետու Նավե

7. Դատավորաց
8. Հռութ
9. Ա Թագավորաց (=Ա Սամուել)
10. Բ Թագավորաց (=Բ Սամուել)
11. Գ Թագավորաց (=Ա Թագավորաց)
12. Դ Թագավորաց (=Բ Թագավորաց)
13. Ա Մնացորդաց (=Ա Ժամանակագրություն)
14. Բ Մնացորդաց (=Բ Ժամանակագրություն)
15. Ա Եզրաս (Երկրորդականոն)
16. Բ Եզրաս (=Ա Եզրաս)
17. Նեեմիա
18. Տովքիթ (Երկրորդականոն)
19. Հուդիթ (Երկրորդականոն)
20. Եսթեր
21. Ա Մակաբայեցվոց (Երկրորդականոն)
22. Բ Մակաբայեցվոց (Երկրորդականոն)
23. Գ Մակաբայեցվոց (Երկրորդականոն)

- Բ. Բանաստեղծա-ուսուցողական
24. Սաղմոսաց
  25. Առակաց
  26. Հոբ
  27. Ժողովող
  28. Երգ Երգոց
  29. Իմաստություն Սոլոմոնի (Երկրորդականոն)
  30. Իմաստություն Սիրաքի (Երկրորդականոն)

- Գ. Մարգարեական
- Փոքր մարգարեներ
31. Ովսեէ
  32. Ամովս
  33. Միքեա
  34. Հովել
  35. Աբդիու
  36. Հովնան
  37. Նավում
  38. Ամբակում
  39. Սովոնիա
  40. Անգեա
  41. Զաքարիա
  42. Մաղաքիա

- Մեծ մարգարեներ
43. Եսայի
  44. Երեմիա
  45. Բարուք (Երկրորդականոն)
  46. Ողբ
  47. Երեմիայի նամակը (Երկրորդականոն)
  48. Եզեկիել
  49. Դանիել

Քրիստոնեական Եկեղեցու կանոնը

Ինչպես առաջյալները, այնպես էլ առաջին Եկեղեցական հայրերը իբրև սուրբ և աստվածաշունչ գրքեր օգտագործում էին թե՝ նախականոն և թե՝ երկրորդականոն գրքերը: Հուդայական կանոնի կազմությունից հետո (մ.թ. 100 թի շուրջ) Քրիստոնեական Եկեղեցու ժողովը ստեղծվեցին երկու հոսանքներ, հատկապես 4-5-րդ դարերում, որոնցից մեկը հետևում էր հուդայական կանոնին (Մեծն Աթանաս, Կյուրեղ Երուսաղեմացի, Եպիփան Կիպրացի, Հիլարիոս, Ոուֆինոս, Հերոնիմոս, Լաոդիկեա 365թ. ժողով), մյուսը՝ ալեքսանդրյանին (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, Հովհան Ուսկեբերան, Կյուրեղ Ալեքսանդրացի, Թեոդորիտոս Կիրոսցի, Լակտանտիոս, Ամբրոսիոս, Օգոստինոս, Իպառնոսի 393թ.ի, Կարթագենի 397 և 418 թթ. ժողովներ, վաղ քրիստոնեական արվեստ, Ս. Գրքի հնագույն ձեռագրերը և թարգմանությունները): Ի վերջո հաղթանակում է հունական կամ ալեքսանդրյան կանոնը, որ ընդունվում է ինչպես Կաթոլիկ և Օրթոդոքս, այնպես էլ Հայ Եկեղեցու կողմից:

Բողոքական Եկեղեցիները 16-17-րդ դարերում մերժում են Հին Կտակարանի երկրորդականոն գրքերը, դուրս հանում Աստվածաշունչից՝ «սուրբ» գրքեր ճանաչելով միայն հուդայական կանոնի 39 գրքը:

## ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

### Ա. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հին Կտակարանում շարադրված՝ աշխարհի պատմության հետ միաժամանակ սկսվող սրբազան պատմության առանցքում ընկած է Աստուծոն ընտրյալ ժողովրդի՝ Խորայելի պատմությունը, մի ժողովրդի, որ կոչվել էր Կրողը լինելու Աստվածային Հայտնության և միջոցը՝ ողջ մարդկությանը բաշխվող Աստվածային օրինության:

Պատմական բովանդակություն ունեն իիմնականում Հին Կտակարանի այն գրքերը, որոնք հունարեն Աստվածաշնչում բնութագրվում են պատմական անվանումով: Մյուս երկու հավաքածուները՝ բանաստեղծառությունների և պատմական անվանումով: Այսուհետեւ անվանումով են պատմական վկայություններ, սակայն պատմական գրքեր չեն, այնուամենայնիվ հարուստ նյութով ընդլայնում են այդ պատմությունը և հասկանալի են դաշնում միայն պատմական տվյալների ուսումնասիրությամբ և պատմության մեջ նրանց տեղադրումով:

#### 1. Խորայելի պատմությունը

Հին Կտակարանում շարադրված պատմական դեպքերի, հատկապես նախնական շրջանի, ձգրիտ ժամանակագրությունը կազմելը բավականին դժվար, գուցե և անհնարին է, քանի որ սրբազան հեղինակները իիմնականում մտահոգվել են ոչ թե պատմություն գրելով, այլ Աստվածային տնտեսության և պատգամների արտահայտումով: Այնուամենայնիվ, նկատի ունենալով ինչպես աստվածաշնչական, այնպես էլ արտաաստվածաշնչական վկայություններն ու հնաբանական տվյալները, կարող ենք ընդիհանուր գծերով ուրվագծել այդ պատմությունը և շարադրել կարևորագույն դեպքերը:

Նկատելի է, որ Ծննդոցից մինչև Թագավորաց գրքերը շարադրվում է մի անընդհատվող պատմություն: Թագավորաց գրքերով սկսվում է մի նոր շրջան, որ կրկնվում է նաև Մնացորդաց գրքերում և լրացվում Հռութի, Եզրասի, Տովբիթի, Հուդիթի, Եսթերի և Նեեմիայի գրքերով: Մի բաց շրջանից հետո Խորայելի պատմությունը շարադրվում է Մակարայեցվող գրքերում և ավարտվում Հին Կտակարանից դուրս՝ Հովսեփ Փլարիոսի «Եբրայական հնաբանություն» գրքում:

#### Նախապատմական շրջան

Այն ամենը, որ նախորդում են Խորայելի պատմությանը և վերաբերում են տիեզերքի ու մարդու ստեղծմանը, դրախտին, նախամարդու անկմանն ու պատժին, ջրհեղեղին ու Բարելոնի աշտարակաշինությանը, կազմում են մարդկության նախապատմությունը (Ծննդոց 1-11): Այստեղ հիշված, այսպես կոչված, Աղամական մեղքը, որ շեղեց մարդուն և հանգեցրեց նրան իր նախնական կատարելությունը կորցնելուն, արդարացնում և պատճառաբանում է Խորայելի ժողովրդի ընտրությունը միջնորդի դերում վերականգնելու կորցրածը և կործանվածը: Այսպիսով Աստուծոն ընտրած ժողովուրդը՝ Խորայելը, մտնում է պատմության անիվի մեջ, որ սկսվում է Աբրահամ նահապետի կոչումով քրիստոնեության երևան գալով:

## Առաջին պատմական շրջանը (1750-1050)

Մարդկության նախապատմությանը հաջորդում են հայրապետների պատմությունները, որ կազմում են սրբազն պատմության ակունքները: Աստված Աքրահամին առաջարկում է լքել իր ծննդավայրը՝ Սիցագետքի Խառանը և հաստատվել այն Երկրում, որ իրեն ցույց կտրվի և ուր սպասվում է իրեն Աստուծու առատ օրինությունը: Թեև հեթանոս, Աքրահամը անսում է Աստուծու կանչին և Երկար ողիսականից հետո ընտանիքով հասնում Քանան, ուր Աստուծու հետ ուխտ կնքելով, դառնում է ընդունողը աստվածային ավետումների, որ հաջորդաբար փոխանցվում են իր ժառանգներին՝ սերմոդից սերունդ: Աքրահամով հրեական ազգը արմատավորվում է Պաղեստինում, սակայն նրա ժառանգները Հակոբի ժամանակ սովոր պատճառով ստիպված են լինում հեռանալ և հաստատվել Եգիպտոսում (Ծննդոց 12-50):

Նեղոսի դելտայում Գեսեմ բարեբեր Երկիրը հյուրընկալում է նրանց շուրջ չորս դար (16-13), առանց փոխելու նրանց քոչվոր կյանքի ձևը և ազգային բնույթը: Նրանց Վտանգավոր աճը առաջացնում է Եգիպտացիների հակառակությունը, որի հետևանքով տեղի է ունենում Խորայելի Ելքը Եգիպտոսից և Կարմիր ծովից հրաշալի անցքը Մովսեսի (1220թ.) առաջնորդությամբ: Այս լուսավոր անձնավորությունը Աստուծու նախաձեռնությամբ ստանձնում է առաջնորդելու Խորայելին անապատի միջով դեպի Քանան: Սինայում Աստված Մովսեսին իբրև միջնորդ օգտագործելով, ուխտ է կնքում ազատագրված ազգի հետ, տալով նրան իր Օրենքը (Ելից):

Այս Ուխտը Խորայելին տվեց ազգային և կրոնական ինքնագիտակցություն: Իր այդ Օրենքով հաստատելով բարոյական և ծիսբական մի շարք բարեկոխություններ, Աստված հետապնդում էր հասնելու իր վերջնական նպատակին. «Եթե ուշադիր լսեք իմ ասածը և պահեք իմ դրած ուխտը, դուք բոլոր ցեղերի մեջ կլինեք իմ ընտրյալ ժողովուրդը... կկազմեք քահանաների իմ թագավորությունը և կլինեք իմ սուրբ ազգը» (Ելից 19:5-6):

Այս կետից սկսվում է խորայելացիների մի Երկար և արկածախնդրային թափառում անապատում, որի ընթացքում ձեռք են բերում ազգային միջության գիտակցություն: Միաժամանակ նախապատրաստվում են Ավետյաց Երկիր մտնելուն, որ իրականանում է Մովսեսի մահվանից և Նավեհի որդի Հեսուի առաջնորդ ընտրությունից հետո (Թվոց):

Նոր առաջնորդով և հրաշքով Հորդանան գետից անցումով սկսվում է աստիճանաբար Ավետյաց Երկրի նվաճումը տեղացի բնակչության դեմ մի շարք հաջող գործողություններով և 12 ցեղերի մեջ Երկրի բաժանումով (Հեսու Նավեհ):

Սակայն քանանացիները, որ վրնդվել էին իրենց վայրերից, չհանդուրժեցին, ինչպես որ բնական էր, ներխուժողներին և շուտով կազմավորվեցին նրանց վրնդելու համար: Այդ դժվարին օրերին Երևան Եկան դատավորները՝ նշանավոր զինվորական գործիքներ, որոնք դիմագրավեցին թշնամական հարձակումները և պաշտպանեցին գրաված Երկիրը, այդպիսով իրենց ժողովրդի բնակեցումը հաստատելով Պաղեստինում և դեկավարելով նրանց (1180-1050թ.) մինչև թագավորության շրջանը (Պատավորաց):

## Երկրորդ պատմական շրջանը (1050-538)

Թագավորության հաստատումով սկսվում է Խորայելի պատմության Երկրորդ շրջանը: Թագավորական աստիճանը հաստատվում է վերջին դատավոր, կրոնական և քաղաքական առաջնորդ Սամուելին ներկայացված ժողովրդական պահանջով: Սամուելը նախ հակառակվում է, ժողովրդի պահանջը համարելով հակառակություն իշխող աստվածա-պետականության դեմ, քանի որ պետության միակ դեկավար Աստված է: Աստիճանաբար, սակայն, տեղի է տալիս և Սավուլին օծում է թագավոր (1040-1005): Ավելի ուշ, սակայն, գահընկեց է անում նրան, իր անօրինությունների համար, և նրա փոխարեն թագավոր է օծում Դավիթին (1005-966): Դավիթը հարեւան ազգերի, հատկապես փողտացիների դեմ հաղթական պատերազմների շնորհիվ կարողանում է միացնել խորայելական ցեղերին, դարձնել մի ամբողջություն և ստեղծել մի պետություն՝ Երուսաղեմ կենտրոնով: Հակառակ իր բնակվորության թուլություններին, աչքի է ընկել Աստուծու նկատմամբ իր բարեպաշտությամբ և նվիրումով ու համարվել Հին Կտակարանի ակնառու դեմքերից մեկը:

Նրա որդի և հաջորդ Սոլոմոնի (966-926) թագավորությամբ փոքրիկ, սակայն նշանավոր խորայելական թագավորությունը մտնում է մի խաղաղ և բարենպաստ ժամանակաշրջան, ձեռք բերում միջազգային հեղինակություն: Սոլոմոնը կազմակերպում է Երկրի տնտեսությունը, զարգացնում առևտրական և այլ բնույթի կապեր հարեւան ժողովուրդների հետ, զարկ տալիս մշակույթին և շինարարությանը: Նրա կարևոր գործերից մեկն է տաճարի կառուցումը Երուսաղեմում:

Սողոմոնի մահով թագավորությունը բաժանվում է Երկու մասի: Հյուսիսային շրջաններում 10 ցեղեր ստեղծում են Խորայելի թագավորությունը Սիբեն մայրաքաղաքով, հարավում՝ Հուդայի և Բենիամինի ցեղերը ստեղծում են Հուդայի թագավորությունը Երուսաղեմ մայրաքաղաքով: Բաժանումը բերում է թուլացում: Երկու թագավորություններն էլ իրենց պատմությունը շարունակում են անկման և կազմալուծման ճանապարհով: Հարեւան ցեղերը համարձակություն ստանալով անցնում են ավագակային հարձակումների: Թագավորների անհեռատես քաղաքականության պատճառով ներս են թափանցում հեթանոսությունն ու անբարոյականությունը՝ խախտելով և քանդելով Երկիրը: Խորայելի թագավորությունը վերանում է 722թ. Ասորեստանի կողմից: Բնակչության մեծ մասը գերի է տարվում և նրանց հողերում հաստատվում են օտար բնակիչներ: Բնակչության այս խառնումով առաջ են գալիս սամարացիները, որ բաժանվում են ազգային ծոցից և ստեղծում իրենց հասարակությունը:

Հետագայում նոյն բախտին է արժանանում նաև Հուդայի թագավորությունը, 586թ. կործանվելով Բաբելոնի կողմից և գերեվարվելով նշանավոր բաբելոնյան գերության, որ տևում է 48 տարի (586-538): Այն դժվարին պայմանները, որոնց մեջ ընկան ինչպես գերության տարվածները, այնպես էլ Պաղեստինում մնացածները, նրանց ստիպեց նորից դառնալ դեպի Աստված և հուսալ քաղաքական և կրոնական վերականգնում (Ա-Դ Թագավորաց և Ա-Բ Մնացորդաց):

Երրորդ պատմական շրջանը (538-մ.թ. 70թ.)

Բաբելոնական թագավորության կործանումով և Միջագետքի, Սիրիայի ու Պաղեստինի վրա Պարսկաստանի իշխանության տարածումով (539-332) Պարսից Կյուրոս թագավորի հրամանով գերեվարված հրեաներին իրավունք է տրվում վերադառնալ իրենց հայրենիքը: Զորաբաբելի առաջնորդությամբ հայրենիք վերադառնալով նրանք այն գտնում են օտար տարրերով բնակեցված: Նրանց հետ ծովման վտանգից հեռու մնալու նպատակով նախ և առաջ ձեռնամուխ են լինում Երուսաղեմի և մասնավորապես տաճարի վերականգնմանը, որի շուրջն էլ հանախմբվում են իբրև նորակազմ ընկերություն, կազմակերպելով իրենց կրոնական կյանքը: Այս ողջ գործունեությանը մեծ նպաստ է բերում Զորաբաբելը: Կարեւոր դեր են խաղում նաև Երկու այլ անձեր. քաղաքական դեկավար Նեեմիան (445) և կրոնական դեկավար Եզրասը (428): Առաջինը նվիրվելով քաղաքի պարսպի ամրացմանը և կատարելով մի շարք քաղաքական բարեփոխություններ, ձևավորում է հասարակության արտաքին կյանքը: Երկրորդը նվիրվելով կրոնին և Օրենքի ու ազգային ավանդությունների պահպաննանը, կազմակերպում է ներքին կյանքը և դարնում հետգերութենական հուդայիզմի հիմնադիրը (Բ Եզրաս և Նեեմի):

Պարսկական իշխանությանը հաջորդում է հելլենիստականը (332-165): Սելևակյանների իշխանությունը, որ տարածվում էր նաև Պաղեստինի վրա, մեծ վտանգ էր հուդայիզմի համար՝ մշակութային, կրոնական տեսանկյունից: Անտիօքոս Դ Եպիփանեսը (175-163) փորձում է ջնջել հրեական կրոնը և ստիպել հրեաներին հելլենանալ: Զախողվում է, սակայն, իր ծրագրերում, հանդիպելով Մակաբաեցիների անհապաղ և անկոտրում դիմադրությանը (167-164) (Ա-Բ Մակաբաեցվոց):

Մ.թ.ա. 63 թ. Հռոմեական կայսրությունը կործանում է Սելևակյանների պետությունը, գրավում Պաղեստինը և այն դարձնում հօռմեական նահանգ: Հրեաները ապրում են հոգեկան և կրոնական մեծ Ճնշում, որով և անմիջական ու առաջնահերթ է դառնում Մեսիայի՝ Փրկչի գաղափարը: Նրանց հաճախակի ընդգումները հանգեցնում են ազգի և հայրենիքի համար ողբերգական իրողության՝ Երուսաղեմի կործանմանը մ.թ. 70 թ.-ին:

## 2. Սրբազն պատմության յուրահատուկ մեկնաբանումը

Հին Կտակարանի գրքերը ոչ թե պատմական երկեր են, այլ կրոնական գրականության ստեղծագործություններ: Սրբազն հեղինակները դրանք շարադրել են ոչ թե պատմություն գրելու, այլ պատմական տվյալների միջոցով իրենց կրոնական զգացմունքը արտահայտելու և իրենց հավատքը ամրապնդելու համար:

Հստակ է, որ խորայելական կրոնը մեծ և յուրահատուկ դեր է խաղացել Խորայելի պատմության համար, մի պատմություն, որ ընթանվում է միայն հավատքի միջոցով, քանի որ հավատացյալ մարդկանց գործ է և ուղղված է անձանց, ովքեր կարող են բաժանել այդ հավատքը: Այս պատմության մեջ Խորայելի պատմական անցյալը շարադրվելուց ավելի արտահայտվել է Աստուծոն գործուն մասնակցությունը պատահարներին:

Անշուշտ հրեաները իին աշխարհի միակ ժողովուրդը չէին, որ կարևորություն էին տալիս իրենց պատմության մեջ աստվածային միջնորդություններին, սակայն միակ ժողովուրդն էին, որ իրենց պատմության և ապագայի միակ կարգավորողը համարում էին Աստծուն:

## Բ. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՌՒՍՍՈՒՆՔԸ

### 1. Աստվածային տնտեսության փրկչաբանական ծրագիրը

Հին Կտակարանում ներկայացված սրբազն պատմության միջով երևան է գալիս Աստուծու ծրագիրը մարդու փրկության համար: Այս ծրագիրը, կոչվում է «աստվածային տնտեսություն»: Խոսքը մի խորհուրդի մասին է, որ գոյություն է ունեցել Աստուծու մտքում և արտահայտվել է աստիճանաբար Հին Կտակարանի հայտնության, և ամբողջապես Նոր Կտակարանի հայտնության մեջ: Այդ ծրագիրը սկսվում է Արքահամի կոչումով, որի անձնավորության միջոցով հրեական ազգը կոչվում է միջնորդի դեր ստանձնելու Աստուծու և մարդկանց հարաբերությունների վերականգնման գործում, որ ընդհատվել էր նախամարդու անկումով:

### 2. Աստվածային ծրագրի նախապատրաստությունը Հին Կտակարանի սրբազն պատմության մեջ

Մարդու անկումը և նրա մեղքը: Աստված ստեղծում է մարդուն «ըստ պատկերի և ըստ նմանութեան իւրոյ» (Ծննդոց 1 26), օժտելով նրան հոգեկան բոլոր շնորհներով՝ բանականություն, ազատություն և այլն, և տալով նրան իշխանություն ողջ աշխարհի վրա, միաժամանակ դնելով նաև մարդկային ազատության մի սահմանափակում, որ Հին Կտակարանում արտահայտված և բարու և չարի գիտության ծառից չուտելու պատկերով (Ծննդոց 2 17): Մարդը չի հասկանում այդ սահմանափակության դաստիարակչական բնույթը և անտեսելով աստվածային պատվիրանը, ընկնում է մեղքի մեջ, հեռանալով իր արարչից: Աստված, եկնելով իր արարածների նկատմամբ ունեցած հոգատարությունից և ցանկանալով նրանց վերադարձնել նախնական նախաանկումային վիճակին, մեղավոր մարդկությունից ընտրում է մի ժողովուրդ՝ Խսրայելին, իր ծրագրի համար իբրև միջոց օգտագործելու համար:

Ծննդոց գրքում Խսրայելի այս ընտրությունը նախապատրաստվում է մարդկության նախապատմությամբ՝ մի քանի ընտրյալ մարդկանց միջոցով. Աբելի զոհը ընդունելով, Ենովքի օգտագործումով, Նոյի արդարության ձանաչումով, Սերին օրինություն տալով հասնում է հավատարին Արքահամին, փորձելով նրան Խսահակի զոհաբերությամբ:

Արքահամը և Աստվածային ավետումները: Արքահամի ընտրությունը և կոչումը կազմում է Աստվածային տնտեսության նախնական փուլը: Նրա անձնավորության միջոցով օրինվելու են աշխարհի բոլոր ազգերը (Ծննդոց 22 18): Նրան տրված ավետումները ժառանգելու են իր հաջորդները՝ Խսահակը, Հակոբը, Հուդան: Այդ ավետումները պիտի փոխանցվեն Աստուծու մի այլ ընտրյալ զավակին՝ Դավիթ թագավորին, իսկ ժամանակի լրմանը պիտի հանգեն «Դավիթ որդուն» (Մատթ. 1 1), որ է նույն ինքն Հիսուս Քրիստոս:

Քրիստոս, ըստ մարգարեների միջոցով արտահայտված հուդայական վախճանաբանության, սպասվող Մեսիան է, որի անձնավորության մեջ Եսային տեսնում էր Եմանուելին՝ «Խսահաղության իշխանին» (9 6/5°), «Արդար թագավորին» (11 1°), Երեմիան՝ «Արդարության շառավիղին» (23 5), Եգեկիելը՝ «Հովիվին» (34 23, 37 24), Զաքարիան՝ «» (9 9): Քրիստոս Արքահամի միակ ժառանգորդն է, որի մեջ համախմբվում և իրականանում են Աստվածային խոստումները: Մեսիականությունը ձիշտ հասկանալու համար պիտի ընդունենք, որ խոսքը ոչ թե Երկրային մի իրավիճակի մասին է, ինչպես որ սխալ էին հասկացել հրեաները, այլ Երկրի վրա Աստվածային թագավորության հաստատման մասին է:

Ելքը և Սինայի Ուխտը: Իրականացնելու համար իր ծրագիրը Աստված Խսրայելին ազատագրում է Եղիատոսի գերությունից և դարձնում ազատ ազգ: Այս գործողության համար ընտրվում է Մովսեսը, կազմակերպելու համար Խսրայելի Ելքը Եղիատոսից և անապատի միջով առաջնորդելու դեպի Ավետյաց Երկիր՝ Քանան: Աստված Մովսեսին է հայտնում իր անունը՝ Յահվե, և միաժամանակ իր փրկչաբանական ծրագիրը: Մովսեսը Սինայի լեռան վրա հանդիսանում է միջնորդը Աստուծու և ազատագրված ազգի միջև Ուխտի կնքման: Օրենքը, որ Աստուծու կողմից տրվում է մարդկանց, նպատակ ուներ Խսրայելին դարձնե-

լու իրեն ծառայող մի ընկերություն, որ ընդունակ լիներ հաղորդակցվել Աստուծո կամքին, դառնալ նրա վկաները ազգերի մոտ և անհրաժեշտ միջոցները՝ մարդկության վերականգնման համար:

Սինայի Ուխտով հսրայելը, որ իբրև արդեն ընտրյալ ազգ տարբերվում էր մյուս հեթանոսական ազգերից, պարտավորվում է կատարել Աստուծո կամքը և ծառայել նրան իր պաշտամունքով: Փոխարենը Աստված հովանավորում է նրան: Այսպիսով Յահվեն դառնում է հսրայելի Աստվածը, իսկ հսրայելը՝ Յահվեի ժողովուրդը, որ հետ այսու քանում է որդու (Ելք 4 22, Ովսեա 11 1), հովվի (Սաղմ. 79 2, 94,7), հարսի (Ովսեա 2 4, Երեմիա 2 2, Եզեկ. 16,8), այգիի (Եսայի 5 1, Սաղմ. 79 9), ժառանգության (Բ Օրինաց 9 26) տեղը և այլն: Այս ամենը նկատի ունենալով հասկանալի է դառնում, որ Ուխտը երկու կողմերի միջև կնքված իրավաբանական մի չոր ակտ չէ, այլ անսահման սիրո օրինակ, ինչպես որ այն մեկնում են մարգարեները, որ Աստուծո կողմից արտահայտվում է իբրև հոգատարություն, իսկ ժողովորդի կողմից՝ հնագանդություն:

Այս ամենով համդերձ պետք է շեշտվի, որ հսրայելի նկատմամբ ունեցած Աստուծո նախընտրությունը երբեք չի նշանակում, որ աստվածային ծրագիրը բացառապես վերաբարում է հսրայելի ժողովորդին, ինչպես որ սխալ էին հասկացել հսրայելացիները և արհամարհում էին մյուս ազգերին: Այսպիսի մի սահմանափակում անհարիր էր աստվածային տնտեսության տիեզերականությանը:

Միջնորդությունը փրկության պատմության մեջ: Որպեսզի ապահովվի Ուխտի անխափան գործունեությունը և տիեզերքում իր մեծ առաքելությանը ընտրյալ ժողովորդի նախապատրաստությունը, Աստված հոգ է տանում, որ ժամանակ առ ժամանակ երկան գան ընտրյալ անձեր, որոնք ունենալով հատուկ առաքելություն, պիտի կատարեն միջնորդի դեր: Սրանց է վստահվում հաղորդակցությունը ժողովորդի հետ: Սրանց միջոցով է, որ Աստված հաղորդում է մարդկանց իր ցանկությունը, գտնվում է հարատև շփման մեջ: Այս միջնորդների կարգին են դասվում Աբրահամը, Մովսեսը, Դավիթը և այլ թագավորներ, կրոնական առաջնորդներ, մարգարեներ և այլն:

Մարգարեական գաղափարախոսության մեջ այս միջնորդի դերը բռնում են միջնորդներ, որոնք երկան պիտի գան ապագայում և կապ ունեն Աստուծո նոր ժողովորդի հետ, ինչպես օրինակ՝ Յահվեի ծառան (Եսայի 40-55), որը իր միջնորդի դերից բացի պետք է զոհվի ժողովորդի համար, Մարդու որդին (Դանիել 7 13), որ պետք է թագավորի ազգերի վրա և ապահովի Աստուծո թագավորությունը աշխարհի վրա:

Այս երկու միջնորդ տիպերն էլ նախաներկայացնում են Հիսուսին՝ Հայր Աստուծո և ողջ մարդկության միջև Միակ միջնորդին:

Հստակ է արդեն, որ Ուխտի կնքումից, աստվածային Օրենքի տվյալունից և իբրև բնակության վայր խոստացված երկրի շնորհումից հետո կրոնը ընտրյալ ժողովորդի համար դարձավ հաստատակամության և ուղղագործության խնդիր: Աստուծո այն հայտարարությունը, թե. «Ահա քո առջևն են դնում կյանքն ու մահը, բարին ու չարը» (Բ Օրինաց 30 15) նրանց պարտավորեցնում է ընտրություն կատարել կյանքի և մահվան, Օրենքի պատվիրանները կատարելու և չկատարելու միջև: Եթե հնագանդվեն և իրենց ցանկությունները համապատասխանեցնեն Աստուծո խոսքին, կապահովեն Աստուծո Օրինությունը, այլապես՝ Նրա անեծքը:

Ավետյաց երկիրը և նրա փորձությունները: Այստեղից սկսվում է մի նոր փուլ, որ անմիջապես կապվում է այն երի հետ, որ խաղում է բնակության վայրը և նրա նյութական բարիքները հսրայելի կյանքում:

Հսրայելը ոգևորվում է, ինչպես որ բնական էր, որովհետև անապատի տաժանելի պայմաններից հետո ի վերջո ժառանգում է այն երկիրը, որ Աստված խոստացել էր Աբրահամին: Զգում է, որ տիրել է մի երկրային դրախտի և մեկնադիշտ նվիրվում է նրան: Չեն ուշանում երկան գալ մնայուն հաստատման գաղափարը և սեփականատիրության ցանկությունը, որից և բխում են անարդարությունը, շահագործումը, ապականությունը և հպարտությունը: Հարևան քանանացիների հեթանոսական սովորություններ մուտք են գործում հսրայելի կյանքում: Հսրայելը շուտով մոռանում է, որ ինքը Աստուծո սպասավորն է մի երկրի վրա, որը իրեն նվիրել է նույն ինքն Աստված և որ ինքը, այնուամենայնիվ, «պանդուխտ է» (Սաղմ. 119 19), կայչում է այդ երկրին էգոհստորեն, մինչ պետք է իիշեր Աստուծո բարությունը և արտահայտեր նրա նկատմամբ իր շնորհակալությունը: Շատ կարճ ժամանակում ընտրյալ ազգը խախտելով Ուխտի պատվիրանները և հեռանալով աստվածային Օրենքից, քանդում է Աստուծո հետ ունեցած իր կապերը և գիտակցորեն հեռանում իր ընտրության նպատակից: Կրկնվում է նախամարդու մեղանչման սխալը: Անհնագանդությունը խորքում նշանակում էր Աստուծո ուժի նկատմամբ հավատքի մերժում և Աստծուն իր կյանքը վստահելու վարանություն: Մեղքը դարձալ դառնում է աստվածային ծրագրի իրականացման հիմնա-

կան խոչընդոտը: Այն անշնորհակալ ազգի կյանքում վերածվում է մի մնայուն վիճակի, որ հետ այդու առաջնորդում է նրա մտքերը և գործերը, ողբերգական հետևանքներով:

Իսրայելի մեղքը և նրա արդար պատիժը: Իզուր են մարգարեները իրենց նվիրում դժվարին և չարաչար պայքարի, որպեսզի խելքի բերեն ու ետ կանգնեցնեն մահաբեր ձանապարհից: Իրենց քարոզներով դատապարտում են մեղքը և կոչ անուն ապաշխարության, զգուշացնում են իշխաններին, քահանաներին ու ժողովրդին արդարության խախտման, ծիսական շեղումների և այլնի մասին, շեշտում Յահվեի նկատմամբ ունեցած նրանց անհավատարմությունը և կապերի խզումը, նրանց խստասրտությունը և ապականությունը: Քարոզում են ողորմություն, արդարություն, բարեպաշտություն, հեզություն, շեշտը դնում են ապաշխարության ներքին բնույթի վրա, որ պետք է բխի Աստուծու սիրուց, գիտելիքից և վախից: Հակառակում են կրոնական բնույթի օտար նորամուծություններին: Ելնելով Ուխտի պահանջներից գուշակում են պատիժներ և սպառնում ոչնչացում: Այսքանով, սակայն, չեն բավարարվում, այլ ավելի են առաջ գնում, ուղղելով իրենց հայացքը դեպի ապագան ամենայն մանրամասնությամբ ներկայացնում են այն դրաման, որ սպասում է Աստուծու ժողովրդին:

Անհավատարմությունը և հեռացումը հանգեցնում է Սինայական Ուխտի լուծարքին, ինչպես որ լուծվում է մի ամուսնություն ամուսիններից մեկի շնության պատճառով (Ովսեա 2 4, Երեմիա 16 15-ից): Այդ պատճառով էլ մեղավորը ոչ թե Աստված է, այլ նոյն ինքը՝ ժողովուրդը, որ իր մեղավոր ընթացքով պատճառ է դառնում իր արդար պատժին: Այս պատիժը, որ աստիճանաբար գալիս է թշնամական հարձակումների գերությունների, չարագործությունների միջոցով, իր գագաթնակետին է հասնում Երուսաղեմի կործանումով, գերությամբ և սփյուռքի առաջացումով: Իսրայելն իբրև պետություն այլևս գոյություն չունի, որովհետև կորցրել է իր մայրաքաղաքը, իր տաճարը, իր թագավորին, իր պատիվը: Այսպիսվ առաջնորդվում է տաժանակիր ազգային փորձության, որով ամենայն մանրամասնությամբ և ճշտությամբ իրականանում են մարգարեական գուշակությունները (Եսայի 48 3-ից):

### 3. Աստվածային ծրագրի ամբողջացումը ժամանակի լրմանը

Փրկության նոր տնտեսության ձևավորումը: Այս կետից իսրայելի պատմությունը մտնում է մի նոր փուլ, որ որակվում է ժամանակների սպասումով: Կռաջ է գալիս Նոր Ելքի գաղափարը, որը նորից ժողովրդին պիտի առաջնորդի աքսորի տանջանքներից դեպի ցանկալի երկիրը՝ Պաղեստին, ուր Յահվեն կիայտնի իր փառքը և կտարածի իր իշխանությունը բոլոր ազգերի վրա: Նրա հույսերը կենտրոնանում են մի նոր Դավթի, մի նոր Երուսաղեմի, մի նոր տաճարի, մի «նոր երկնքի ու երկրի» (Եսայի 67 17) վրա: Մարգարեները այս ծգտումների ու հույսերի միջից տեսնում են մի նոր մեսիական փրկություն, որ վերջին նպատակակետն է և դեպի ուր առաջնորդում է Աստված սրբազն պատմությունը: Այս փրկությանը իսրայելի հետ մեկտեղ պիտի մասնակից լինեն բոլոր ազգերը: Հին Կտակարանում խարսխված տնտեսությունը անկարող դարձավ իրագործելու իր ծրագիրը հավաքելու «սուրբ ժողովրդին» (Եսայի 62 12), այնուամենայնիվ Հին Կտակարանի ծրագիրը մնում է անփոփոխ: Աստված, հավատարին իր որոշմանը, ժամանակի լրման հետ պիտի հաղթի մեղքին, որ ժամանակորապես խանգարել էր իր ծրագրի իրականացման: Ծրագրելով փրկության նոր տնտեսություն, պիտի կնքի Նոր Ուխտ մի նոր ժողովուրդի հետ: Այդ ժողովուրդը պիտի կազմվի իսրայելի մնացորդներից (Եսայի 1 9, Երեմ. 31 7, Միք. 2 12 և այլն), որ փրկվելու է ազգի փորձանքներից և այն ժողովուրդներից, որ ընդունելու են Յահվեի խոսքը:

Նոր Ուխտը և Յահվեի ծառան: Այսպիսով աստվածային տնտեսության սահմանները ընդլայնվում են, քանի որ Նոր իսրայելի հետ միանալու են ազգեր: Հին Ուխտը, որի նախատեսությունները չեն անցնում երկրային իրերի կարգը, ոչ էլ հորիզոնը՝ մի ազգից ավելի, զիջում է իր տեղը Նորին: Վերջինը, որ լրացնում և կատարելագործում է Հինին, չի լինելու համաձայնություն Աստուծու և ողջ ժողովրդի միջև, այլ Աստուծու և ամեն մի անհատի միջև և գրված է լինելու ոչ թե քարե տախտակների վրա, այլ ամեն մեկի սրտում (Երեմ. 31 33, Եզեկ. 36 26, հմնտ. Բ Կորնթ. 3 3): Այսպիսի Ուխտ էին պատկերացնում մարգարեները, որի կնքումով հետապնդում էին ինչպես մարդկային սրտերի փոփոխությունը, ուր պիտի արմատավորվեր Աստուծու Օրենքը և բնակվեր Նրա Հոգին, այնպես էլ խաղաղության հաստատումը ողջ արարչագործության մեջ: Խոսքը մի հավիտենական Ուխտի մասին է (Եսայի 53 3, 61 8), մի խաղաղության Ուխտի (Եզեկ. 37 26), «Նոր Ուխտ»-ի (զբսկմն նզգվնջն), որ հայտարարում է Երեմիամ՝ 31 31, որն ինչ որ իմաստով անկատար ձևով հայտնվելով նահապետների, Սովետի և Դավթի ժամանակներում, պետք է իրականանա կատարելապես Յահվեի ծառայի միջնորդությամբ (Բգբ Ոչնիքն):

Յահվի ծառան Աստուծո գործակիցն է Աստվածային տնտեսության գործում, որ կոչվել է հավաքելու Նոր ժողովրդին, որի առաքելությունն է ոչ միայն քարոզել Աստուծո փրկության պատգամը, այլ մասնակցել բոլոր մեղավորների արդարացման գործին, իր ուսերին վերցնելով նրանց մեղքերի ծանոթությունը՝ զոհելով իր կյանքը: Աստուծո կողմից սրբացված և նրա հոգով շաղախսված նոր ժողովրդի առջևից Վերանում է այն պատճենը, որ բաժանում էր Խրայելին ազգերից, որոնք հետ այսու նրա հետ միասին պիտի մասնակից լինեն այն օրինությանը, որ տրվեց Աբրահամին՝ լինելով Վերջինիս հոգևոր ժառանգները:

Ընթերցել: Երեմիա 31:31-34:

Հավատարիմից՝ Ճշմարիտ Աստուծո ծառան: Խրայելի ընտրյալների և ազգերի միությամբ իրականանում է «Նոր մարդկության» (Եփես. 2,15) Վախճանաբանական հավաքագրումը, որ իրենով ամբողջացնում է Քրիստոս: Սա Նոր Կտակարանի Աստուծո ծառան է, որ ստանձնել է լրացնելու Հին Կտակարանի Յահվեի հավատարիմ ծառայի առաքելությունը: Իր մեջ տեսնում է չարչարվող ծառային և իր մահը համարում քավության զոհ: Նոր Ուխտի միակ միջնորդն է, որ համախոստովանվում է Աստուծո և ժողովրդի միջև, որը հետ այսու կազմվում է «բոլոր ցեղերից ու լեզուներից, բոլոր ազգերից ու ժողովուրդներից» (Հայտն. 5:9, հմմտ. 7:9):

Հիսուս Քրիստոսվ աստվածային տեսությունն անցնելով Հին Կտակարանի նախապատրաստական և անկատար ստադիայից, հասնում է իր վճռական կետին, ամբողջանում է բոլոր ազգերին օրինելու Աստուծո ծրագիրը (Ծննդոց 12:3, Երեմ. 4:2, Իմաստ. Սիրաք 44:21): Հստականում են նաև խոստումների ժառանգորդի և խոստացված ժառանգության գաղափարները: Յահվեի ծառայի միջոցով ընտրյալ ժողովուրդից խոստումներն անցնում են փրկված հավատացյալին, մինչ Յահվեի ծառան ոչ այլ ոք է, եթե ոչ Աստուծո Որդին և Լոգոսը, միակ ժառանգորդը: Քանանի Երկրի և Երկրային Երուսաղեմի ժառանգությունն անցնում է Երկրայինի սահմանները և դաշնում սակավաթիվ ընտրյալների Երկնային հայրենիքը, ուր միշտ տիրելու է կատարյալ երջանկությունը (Բ Օրինաց 28:62, Սաղմ. 36:9, Եսայի 60:21, Զաք. 8:12 և այլն) և ուր պիտի վայելեն հավիտենական կյանքը (Մատթ. 19:29, Տիտ. 3:7):

Նոր ժողովուրդն Աստվածային ծրագրի իրագործման մեջ: Աստվածային հայտնության կրողն այլևս ոչ թե ընտրյալ ժողովուրդն է, ամբողջապես վերցված, այլ անհատ հավատացյալներ, որոնք առանձնանում են Աստուծո նկատմամբ՝ հավատարմությամբ, Օրենքի պահպանումով և իրենց առաքելության խորը գիտակցությամբ: Սրանք Աբրահամի ըստ մարմնո ժառանգներից փոխվեցին ըստ հոգու ժառանգների:: Դարձան միակ կրողներն Աստվածային խոստումների, որ ձեռք բերեցին Քրիստոսի արյունով և կազմեցին Եկեղեցու մարմինը: Սրանք ապրում են ոչ թե Մովսեսական Օրենքով, այլ Հոգու Օրենքով (Հռոմ. 8:2), ձգտում են ոչ թե Ավետման նյութական Երկրին, այլ իրական հանգստության Երկրին՝ Երկնքի թագավորությանը, որ ունի ոչ թե նյութական, այլ հոգեկան բարիքներ (Մատթ. 5:4):

Սա Նոր ժողովուրդն է, Ճշմարիտ Խրայելը, որ ազգերի հավատացյալների համագործակցությամբ փոխարինում է Հին Խրայելին այն դերում, որի մեջ որ վերջինս ծախողվեց: Հավատարիմ «մնացորդն» (Եսայի 4:2), որ Քրիստոսի միջնորդությամբ ի վերջո ստանձնեց ավարտելու մեղավոր մարդկության Վերականգնումը և լինելու Աստվածային օրինության հանձննան օրգանը: Այսպիսով ողջ մարդկային ցեղը վերագտնում է իր միությունը և իր նախնական կատարելությունը, որ կորցրել էր մարդկային մեղքի պատճառով, մինչ միաժամանակ լրանում է մարդու փրկության համար Աստվածային տնտեսության ծրագիրը:

#### Գ. Հին Կտակարանի ԿԱՊԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀԵՏ

##### 1. Քրիստոս Երկու Ուխտերի միացման հանգույցը

Հին Կտակարանը իրեն աշխարում Աստուծո փրկարար գործողության նախապատրաստական շրջան, որ իրականանում է Քրիստոսի դեմքում, ունի անմիջական մի սերտ կապ Նոր Կտակարանի հետ: Այդ պատճառով էլ դրանք հանդիսանում են մի օրգանական ամբողջության մասեր կազմելով Քրիստոնեական Եկեղեցու Սուրբ Գիրքը և հասկացվում են իրեն անբաժան աստվածաբանական միություն:

Իրապես Երկու Կտակարանների աստվածաբանական հիմքում էլ ընկած է մարդու փրկությունը մեղքի ողբերգական վիճակից և մահվան իշխանությունից, որ խանգարում են կյանքի ազատությունը և ընդհատում դեպի աստվածացում և դեպի կատարելություն տանող ձանապարհը: Երուսան էլ ընկնում են աստվածային տնորենության նույն փրկչաբանական ծրագրի տակ, որ Երևան է գալիս որոշակի պատմական դեպքերի և Երևույթների միջև, որ Աստուծո Հին ժողովրդին՝ Խրայելականին, միացնում են Նոր քրիս-

տոնեական ժողովրդի հետ: Այս ծրագրի վերաբերյալ ինչ որ գծագրվում է Հնի հայտնության մեջ, երևան է զալիս ամբողջությամբ Նորի մեջ: Այն, ինչ որ պարզապես նախապատրաստվում, նախատիպվում, նախապատկերացվում է առաջինուն, կամ մերձեցվում է անկատար և ժամանակավորապես, իրավանանում է երկրորդում, ստանում ամբողջություն և վերջնական ձև:

Այսպիսով Հին Կտակարանը իր բնական շարունակությունը գտնում է Նորում, Խրայելի պատմությունը՝ Եկեղեցու պատմության մեջ: Միացնող կապը, որ միմիանց ձուլում և կապում է Հիսուս Քրիստոսն, որի դեմքում լրանում են աստվածային խոստումները, որ տրվեց Աստուծու ժողովրդին մարդկային ազգի փրկության և վերականգնման կապակցուցյամբ:

Ողջ Հին Կտակարանը անհասկանալի է առանց Քրիստոսի ներկայության և առանց այն ամենի, որ տեղի ունեցան նրա երկրային կյանքի շուրջ: Սա Նոր Կտակարանի Աստուծու ճշարիտ ծառան է, որ ստանձնում է գլուխ բերել Հին Կտակարանի Յահվեի հավատարիմ ծառայի առաքելությունը: Սա Նոր Աղամն է, որ նվիրում է մարդուն արդարացում, ազատելով նրան Հին Աղամի մեղքի հետևանքներից: Սա Նոր Մովսեսն է, որ առաջնորդում է մի նոր երկիր, միջնորդում մի նոր Ռիխտի, և առաջնորդում Աստուծու նոր ժողովրդին: Սա աստվածային խոստումների միակ ժառանգողն է, որոնք տրվել են նահապետներին և Դավթին: Միաժամանակ քրիստոնեաները նրա ժառանակիցներն են, որոնք իր մահվան շնորքով ստրկության վիճակից փոխադրվեցին որդեգրության վիճակի:

Այս քրիստոսաբանական ոգով է հասկանում Եկեղեցին աստվածային հայտնության խորհուրդը, որ սկսվել է Հնում և ավարտվել Նոր Կտակարանում: Հինը սկզբից մինչև վերջ ուղղված է դեպի այս հայտնությունը, որ հաստատվում է Հիսուսի դեմքին, նրա ուսմունքին և գործին և իր բարձունքին է հասնում նրա խաչելությանն ու հարությանը, որովհետև միայն Հիսուսով էր հնարավոր անցումը Օրենքի իշխանությունց Շնորքի իշխանությանը, Ավետյաց նյութական երկրից՝ Եկեղեցու սուրբ երկիրը: Հիսուսով վերականգնվում է բոլորի հաշտեցումը Աստուծու հետ և մարդկությունը վերադարձնում է իր նախնական կատարելությանը, որ կորել էր մարդկային մեղքի պատճառով:

## 2. Հնի լրումը Նորի մեջ

Հետևաբար քրիստոնեաների այն հաստատման վրա, թե Նոր Կտակարանի Հիսուսի դեմքով Եկել է Հին Կտակարանի Մեսիան, որ հրեական հույսի առարկան էր, իհմնվում է երկու Կտակարանների միությունը և համագոյությունը: Նոր Կտակարանը, իբրև կատարում այն ամենի, որ խոստացվել էր Հնում, գտնվում է մի աստիճան բարձր, առանց, սակայն որևէ ծնով վնաս հասցնելու նրանց միությունը: Այս գերազանցությունը սահմանում է մի նոր բան, որ իհմնադրվում է երկրի վրա Աստուծու միաձին Որդու հայտնությամբ, որը միաժամանակ հանդիսանում է Աստուծու խորհրդի հայտնությունը, որ դարերի ընթացքում մնացել էր «լռության մեջ» (Հռոմ 16:25): Գործ ունենք իրերի մի նոր վիճակի հետ, ուր իշխում է նրա չարչարանքը և զոհը (զոհվելը), ուր աշխարհը և մարդիկ համարվում են ամբողջովին տարբեր պայմանների տակ գտնվող:

Այսպիսով Նոր Կատակարանը Հնի համեմատությամբ կազում է Աստծու նոր փրկչաբանական տնտեսությունը՝ տիեզերական մղվածությամբ, քանի որ չի վերաբերվում միայն ընտյալ ազգին, այլ բոլոր ազգերին, մինչ Հին Կտակարանը պատվում էր մի որոշակի՝ Խրայելի ազգի հետ համաձայնություն շուրջը և կնքվում է զոհերի արյունով, նորը տարածվում ողջ մարդկության հետ համաձայնությամբ և կնքվում Քրիստոսի արյունով, ըստ իր վկայության. «Այս բաժակը Նոր Ռիխտն է իմ արյունով» (Ա Կորնթ. 11:25):

Մինչ նախկինը սահմանափակ ժամանակի համար էր, երկրորդը իշխում է հավիտենապես և ինչպես որ կանխատեսում էին մարգարեները, գրված է ոչ թէ քարե տախտակների վրա, այլ ամեն մեկի սրտում:

Հակառակ Նոր Կտակարանի այս բոլոր գերազանցությունների Հնի նկատմամբ, նրանց միջև հակադրություն գոյություն չունի, քանի որ երկուսն էլ բխում են Աստուծու ազատ նվիրապետությունից, խոսում նույն ոգեկան լեզվով և վերաբերում Աստվածային տնտեսության տիեզերականությանը: Երկուսն էլ պարունակում են Ճշմարտություններ մարդու կրոնական և բարոյական դաստիարակության համար, նմանվում են, կարելի է ասել, երկու արարանց թատերական երկի, որի երկրորդ և վերջնական արարը կարելի է հասկանալ միայն առաջինը տեսմելուց հետո: Հին Եկեղեցին Հին Կտակարանին մոտեցել է այս սկզբունքով, այս լույսի տակ: Չպետք է մոռանալ նաև, որ այն միակ գիրքն է, որ օգտագործել է Քրիստոս և իր առաքյալները:

Հին Կտակարանը կարելի է հասկանալ միայն, եթե մեր ուշադրությունն ուղղենք Աստուծո մարմնացած Լոգոսին, որի մասին իսկ վկայում են Հին Կտակարանի գրքերը: Իր հերթին Նոր Կտակարանը կարելի է հասկանալ միայն, եթե ուշադրություն դարձնենք Լոգոսի այն փրկչաբանական դերին, որ ուրվագծված է մարգարեական գուշակություններում, որովհետև Լոգոսն է, որ բացառապես պարունակում է միակ Աստուծո խորհուրդը երկու Կտակարաններում էլ:

### 3. Հինը և Նորը ի անբաժանելի աստվածաբանական միության մեջ

Քրիստոնեական Եկեղեցին ճանաչելով, որ Հին Կտակարանը պարունակում է աստվածային գերբնական հայտնության առաջին մասը և մարդու փրկության համար նրա ցանկությունը, որ արտահայտվել է մարգարեների միջոցով, այն համարում է աստվածաշունչ և համարժեք նորին: Միաձայն է նաև այն կարծիքը, որ հայտնությունն ուսուցողական նպատակներով զարգանում է աստիճանաբար անկատարից դեպի կատարյալ ծներու մինչև որ հասնում է Քրիստոսով հայտնությանը, որի լուսով էլ մեկնաբանվում են Հին և Նոր Կտակարանները իբրև մեկ և անբաժան ամբողջություն: Այս դիրքորոշումը հենց սկզբից հաստատեց Հիսուս Քրիստոս՝ Հին Կտակարանում տեսալով նախապատկերված իր ողջ կյանքն ու գործունեությունը, իր մահը և հարությունը: Այս աշնչությամբ էլ համառում է իր առաքելությունն ասելով. «Սի կարծեք թե եկա Օրենքը կամ մարգարեներին լուծելու, չեկա լուծելու, այլ լրացնելու» (Մատթ. 5:17): Ընդհանրապես Նոր Կտակարանի հηինակների կողմից ընդունվում է, որ Հիսուս Քրիստոսի դեմքով, Նրա գործով և չարչարանքով, ինչպես նաև Եկեղեցու հաստատումով իրականացան մարգարեների գուշակությունները: Նոր Կտակարանի հեղինակներն օգտագործել են Հին Կտակարանի գրեթե բոլոր կանոնական գրքերը, բացի Եգրասից, Ժողովորից և Երգ Երգորից: Պողոս առաքյալը Վստահ էր, որ Օրենքը և Մարգարեները հանդիսանում էին վայություններ Քրիստոսի մասին, իսկ Հովհաննես Ավետարանիչն այն կարծիքն ուներ, թե շարունակում է պատմել այն դեպքերը, որ մարգարեացվել էին Հին Կտակարանում: Հատկանշական է հետևյալ համաձայնությունը. «Քննեցեք գրքերը, քանի որ կարծում եք, թե նրանցով հավիտենկան կյանք կունենաք: Բայց հենց դրանք իսկ են, որ վկայում են իմ մասին» (Հովհ. 5:39): Նույն քրստոնեական ոգով էլ Եկեղեցու հայրերը մեկնեցին Հին Կտակարանը:

Եկեղեցին արտահայտելով քրիստոնեության տեսակետը, իր հաստատման օրից իսկ տեսավ Աստուծո խոսքը Հին և Նոր Կտակարանների անբաժանելի աստվածաբանական միության մեջ: Ճանաչելով այս միությունը, ընդունում է Ս. Գիրքն իբրև քրիստոնեական հավատքին կյանքի Օրենք և չափանիշ, որովհետև նրա խոր համոզմանը նույն Աստված է խոսում երկու Կտակարաններում էլ և նույն Հոգին է ներշնչում նրանց հեղինակներին (հմնտ. Եբր. 1:1-2):

### Դ. Հին Կտակարանի աշխարհը

Հին Կտակարանի պատմության դեպքերը տեղի են ունեցել Միջին Արևելքում, այն աշխարհագրական տարածքի վրա, որ այսօր գրալեցնում են Թուրքիայի, Սիրիայի, Լիբանանի, Իսրայելի, Հորդանանի, Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Իրաքի և Իրանի պետությունները: Սա այն կետն է, ուր խաչաձևվում են երեք մայր ցամաքներ՝ Ասիական, Աֆրիկյան և Եվրոպական՝ ռելեֆի, կլիմայի, և քաղաքակրթության բազմազանությամբ: Սա այն շրջանն է, որ տարածվում է Հայաստանի գահավեժ լեռներից մինչև Արաբական մեծ անապատը, Եգիպտոսից մինչև Պարսկական ծոցը: Այստեղ, ուր կային ապրելու բարեբեր պայմաններ, զարգացան հնագույն քաղաքակրթությունները:

#### 1. Պաղեստինը՝ Ընտրյալ ժողովրդի բնակավայրը

Այս վերոհիշյալ ընդարձակ երկրամասի կենտրոնում գտնվում է Պաղեստինը, այն երկիրը, որն անմիջապես կապված է Աստուծո՝ մեղավոր մարդկությանը փրկելու ծրագրի հետ, իբրև այդ փրկությանը առաջնորդառ ընտրյալ ժողովրդի բնակավայրը: Այն մի նեղ և երկար միջանցք է, ծնավորված Միջերկրական ծովի, Արաբական անապատի, Սիրիայի հարավային մասերի և Եգիպտոսի հյուսիսային մասերի միջև: Մի փոքրիկ երկիր է, որ ձգվում է «Պանից մինչև Բերսաբեե» (Ղատ. 20:1), ըստ Աստվածաշնչական բնորոշման՝ սահմանելու նրա հյուսիսային և հարավային սահմանները, 250 կմ:

Հին Կտակարանում հիշվում է որպես «Ֆիլիստեա» (), որ նույնանում է Եբրայական, քարի հետ, որտեղից և առաջացել է Պաղեստին անունը: Այն նախ վերաբերում էր այն երկրամասին, որը ձգվում էր Պաղեստինի հարավային մասում և առաջացել է մ.թ.ա. ժԱ դարում, այնտեղ բնակվող փղշտացիների

անունից: Հետագայում այն անունը ընդհանրացավ իբրև անվանում 12 ցեղերի գրաված տարածության համար, իսկ ավելի ուշ՝ ողջ հսրայելի համար:

Նույն շրջանը տեքստերում հանդիպում է նաև այլ անվանումներով, ինչպես օրինակ. Քանան, Երայեթերն „,, հսրայելի երկիր, Հուդայի երկիր, Ավետյաց երկիր և այլն:

Պաղեստինը կարևոր դեր է խաղացել իին աշխարհի քաղաքական, տնտեսական ու մշակույթային կյանքում: Գտնվելով իին աշխարհի Միջին Արևելքի երկու գերիզոր պետությունների՝ Եգիպտոսի և Միջագետքի (Ասորեստան, Բաբելոն, Պարսկաստան) միջև, կարևոր մասնակցություն է ունեցել այդ ռեգիոնի տնտեսական, առևտրական, ինչպես նաև քաղաքական հարցերում:

**Տեղագրությունը:** Պաղեստինը բաժանվում է հյուսիսից հարավ ձգվող չորս մեծ երկարության գոտիների: Արևմուտքից արևելք գալով դրանք են ա. Ծովափնյա հարթավայրային տարածությունը, բ. Կենտրոնական լեռնային մասը, գ. Հորդանան գետի հովիտը, դ. Անդրհորդանանյան աշխարհը:

ա. Ծովափնյա շրջանը պարունակում է հյուսիսից հարավ ձգվող Ակկոյի, Սարոնի և Ֆիլիստեայի դաշտավայրերը: Այստեղով էր անցնում նշանավոր «Փղշտացիների երկրի ճանապարհը», որ սկսելով Եգիպտոսից անցնում էր Գազա, Ազոտո, Հուդա, Մեգիդո, Ակկո, Տիրո քաղաքներով և հասնում Սիդոն: Մեգիդոյից ուղղությունը փոխելով մտնում էր երկրի ներքին մասը, միացնելով արևմտյան և արևելյան շրջանները:

բ. Կենտրոնական շրջանը, որ հյուսիսից հարավ բաժանվում է Գալիլեայի, Սամարիայի (Եփրեմ) և Հուդեայի (Հուդա), իր ողջ երկարությամբ լեռնային է: Գերալ, Գերմակ, Թաքոր, Գելբուե, Եբալ, Գարիգին և այլ լեռներ ստեղծում են բնական կանալներ, որոնցով անձրևների և աղբյուրների ջրերը մի կողմից հոսում են դեպի Միջերկրական ծովը, մյուս կողմից՝ Հորդանան գետը: Հակառակ ռելիեֆի ոչ նորմալ պայմանների, ծովից փչող քամիները և առատ անձրևները նպաստում են պտղատու այնպիսի ծառերի առատությանը, ինչպես օրինակ ծիթապտուղ, թուզ, խաղող և այլն: Երկիրը բարենպաստ է նաև հողագործության և անասնապահության համար:

Գալիլեայի և Սամարիայի համար բնական սահման է հանդիսանում Կիսոն գետը և Գեսրաել կամ Եսրաել բարեբեր հովիտը, որի հարավում գտնվում է Մեգիդո քաղաքը, նշանավոր իր շուրջ տեղի ունեցած վճռականմարտերով: Ավելի հարավ գտնվում է մի այլ նշանավոր պատմական քաղաք՝ Սամարիան, որը հանդիսանում էր կարևոր հանգույց հյուսիսի և հարավի միջև ընկած ճանապարհին: Գալիլեայի քաղաքներից կարելի է հիշել Սիթեմը և Բեթելը:

Հուդայի հատվածն իր հիմնական մասով անմիջականորեն կապվում է Հին Կտակարանային պատմությանը: Այստեղ է գտնվում Երուսաղեմ մայրաքաղաքը, հսրայելի ազգային և կրոնական կենտրոնը, սուրբ երկիրը, ուր փոխնիփոխ ապրել են Աստուծո Օրինությունը և բարկությունը:

Նրանից հարավ-արևելք ընկած է Հուդայի անապատը, չոր բլուրներով, ուր ողջ տարին բուսականություն չի աճում:

Ֆիլիստեայի և Հուդայի միջև ընկած էր Սեֆելան, բլուրներով և հովիտներով մի տարածություն, որ հաճախ է կրվախնձոր դարձել փղշտացիների և հսրայելացիների միջև:

Բերսաբեկից հարավ Հուդայի բլուրները հավասարվում են գետնին և միանում Նեգոբե անապատին, որը և միաձուլվում է Սինայի անապատի հետ:

գ. Աշխարհագրական յուրահատուկ կառուցվածք ունի Հորդանանի հովիտը: Հորդանան գետը կազմավորվում է Հերմոն լեռան ստորոտից և թափվում Մեռյալ ծով, անցնելով այժմ արդեն ցամաքած խոլե կամ Մարրոն լճի միջով և ապա Գալիլեայի ծովով (Գենեսարեթ կամ Տիբերական լճի): Լեռնային արագահոս և դժվարանցանելի գետ է: Խոլե լիճը գտնվում էր ծովի մակերևույթից 70 մ. բարձրության վրա, իսկ մեռյալ ծովը՝ 390 մ. ցածր: Բացի մի քանի անցանելի վայրերից գետն անանցանելի է և բնական սահման Պաղեստինի արևմտյան և արևելյան շրջանների համար: Նրա բարեբեր հովիտը նպաստավոր է զյուղատնտեսության համար: Մեռյալ ծովը ունի 85 կմ երկարություն: Ամենալայն հատվածը 17 կմ է:

դ. Պաղեստինի ամենաարևելյան մասը Անդրհորդանան է, որ հասնում է մինչև Արաբական անապատ: Հորդանանի վտակները՝ Գարմուկ, Յարուկ, Արմոն և Զերեդ, ստեղծում են համապատասխան շրջաններ՝ Բասան, Գալաադ, Ամոն և Մովար: Բասանը Գարմուկի հյուսիսում, չնայած իր հրաբխային ծնունդի, ունի լայնատարած զյուղատնտեսական տարածքներ: Միաժամանակ հրչակավոր էր իր անասնապահությամբ: Այդ մասին է վկայում աստվածաշնչային «Բասանի կովեր» (Ամովս 4 1, Սաղմոս 22 12) արտահայտությունը: (Սաղմ. 22 12 «Բասանի ծովերը»): Հաջորդ շրջանը Գալաադ էր, խիստ բնակեցված, խաղողագործության և ծիթապտղագործության հարմարավետ պայմաններով, առատ ջրով, խիստ անտառներով և դեռ Ս. Գրական ժամանակներից ծանոթ բժշկական բալզամով:

Հաջորդ երկու շրջանները՝ Ամռնը և Մովսես, աղքատ շրջաններ էին, պիտանի միայն հովվության համար: Ամռնում էր գտնվում Ս. Գրական Ներով լեռը, իսկ Մովսեսի հյուսիսում՝ Եղովմը: Այստեղով էր ձգվում նշանավոր այսպես կոչված «թագավորական պողոտան», որոր Դամասկոսը միացնում էր Անամպանավահանգստի հետ:

Կիհման: Պաղեստինի կիհման և ռելեֆը բազմաբնույթ է, տարբերվում է տեղից տեղ և ընդհանրապես փոփոխական է. մեղմ և քաղցր է ծովափին, դաժան՝ լեռնային շրջաններում, տաք, գրեթե տրոպիկական՝ Հորդանանի հովտում: Հոկտեմբերից ապրիլ անձրևների շրջանն է, մինչ տարվա մնացած ամիսների վրա տարածվում է չոր շրջանը: Անձրևները նվազում են հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք: Առատանում են լեռների՝ դեպի ծովը թեքված լանջերին: Դաշտավայրային շրջաններում հազվադեպ է ձյունում: Հուդայի անապտում, հատկապես ամառվա կեսին, իշխում է անտանելի շոգ: Պաղեստինի ջերմաստիճանը տատանվում է ըստ քամիների և բարձրության: Երուսաղեմը, օրինակի համար ունի 750 մ. բարձրություն ծովի մակերևությից, մինչ ընդհանենը մի քանի կմ դեպի արևելք ընկած Երիքովը 250 մ ցածր է ծովից, նրա կողքին ընկած Մեռյալ ծովը՝ 390մ: Քամիները նույնպես փոփոխվում են: Հյուսիսային ցուրտ քամիները փշում են հաձախ ձյունապատ լեռներից, տաք և չոր քամիները՝ վառվող անապատից, մեղմ և գույ քամիները՝ Միջերկրական ծովից: ԵՎ եթե մի կողմից ծովային քամին գովացնում և կենդանացնում է մարդուն ու բնությանը, ապա անապատինը, որ ավելի երևում է աշնան սկիզբը և ամռան վերջը, սպառնում է ամեն մի կենդանի նշույլ, դառնալով աստվածային պատժի սինվոլ, ինչպես որ ներկայացված է Հին Կտակարանում (հմնտ. Եսայի 25:8, Երեմ. 4:11 և այլն):

## 2. Ավետյաց և ուրախաբեր լուրի երկիրը

Ողջ Հին Կտակարանում բացահայտ է հսրայելի կապն իր երկրի հետ: Պաղեստինը եղել է այն բնակության վայրը, որ հսրայելին է խոստացել Աստված Աբրահամի միջոցով: Այնտեղ նրան սպասում են առատ օրինություն, խաղաղ ու բարիքներով լի կյանք: Այն, իբրև բարիքներով լի երկիր, սեղել է ազատագրված ազգի հոլոսերը անապատի տառապանքների ժամանակ: Այս երկրին «բարի ու բերրի մի երկիր, ուր ջրերի վտակներ ու երկրի խորքերից աղբյուրներ են բխում դաշտերում ու լեռներում, Դա ցորենի, գարու և գինու, այգիների ու նանենիների երկիր է, ձիթենիների, յուղի ու մեղրի երկիր, ուր առանց նեղություն զգալու քո հացը պիտի ուտես» (Բ Օրինաց 8:7-9), այս երկրին պիտի նվիրվի հսրայելը այն գրավելուց հետո և գրելու է իր պատմությունը իբրև Աստուծո ժողովուրդ:

Ավետյաց երկիրը, որ եթե, ըստ Ս. Գրական տկարագրության «կաթ ու մեղր» բխող երկիր (Ելք 3:8) չէ, այնուամենայնիվ ժամանակի ընթացքում հին հրեային հնձեռեց Եղակի հնարավորություններ իր հոգևոր ու մշակութային մակարդակը զարգացնելու համար: Միաժամանակ ազդել է իր կրոնական զգացմունքների և հավատքի վրա, տարբեր ճանապարհներով, և նրան կապված պահել իր ազգային ավանդությունների հետ: Այդ երկրից բացակայության ժամանակ իր սրտում անմար է պահել վերադարձի հուսո կրակը:

Այս երկրում է երևում Աստուծո Որդին, որպեսզի մարդկությանը հայտնի փրկության համաշխարհային պատգամը, այդպիսով Ավետյաց երկիրը դարձնելով աշխարհին ուրախ լուր հաղորդելու ելակետը: